ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՈՐ ՈՒՆԻՑԻ ԱԿԱՆՋՍ.... ԼՈՒԻՑԷ

Կրօնական բանավէճերն ու կռիվները Սատանային ճնարքներէն են:

ԺՈՂ. ԱՌԱԾ.

Կիլիկիո կաթողիկոսարանի ժողովրդային Լսարանի վերջին դասախոսությունը տեղի ունեցավ մարտի 8-ին Մեմորիըլ Հոլի մեջ։ Օրվան Հոգշ. դասախոսը՝ Տ. Տաճատ վրդ. Ուրֆալյան — «Հայաստանեայց Եկեղեցւո դերը գաղութներու պահպանման մէջ» *նյութին շուրջ։ Դասախոսութենեն ետք խոսք առավ* Ն. Ս. Օծութիւն Կիլիկիոյ Շնորհազարդ Հայրապետը *և այդ առթիվ իր սրտի խորքեն պատգամ մը ուղղեց իր հոտին։*

Ահա այդ հրաշունչ և բարձր Պատգամն է, որ կուզեմ գրին հանձնել, որպեսզի ավելի բազմաթիվ հայեր իմանան այդ պատգամը։

Ահա Նորին Սրբո Օծության խոսքերը.

«Սիրելիք, օրվան նյութը շատ կարևոր մի նյութ էր. նա այժմեական մի նյութ էր, վասնզի ուղղակի կապ ունի մեր առօրյա կյանքի հետ։

«Դուք բոլորդ պետք է լավ իմանաք, որ մեր անցյալի գոյությունը ուղղակի կախում ունի Հայ Եկեղեցու գոյությունից։ Երբ հեռացել ենք նրանից, կորել ենք ընդմիշտ, ինչ որ պատմությունը ցույց է տալիս մեզ։ Ով որ այս իրողությունը չի հասկանում, նա պատմության, Հայոց պատմության լիովին հասկացողությունից զուրկ է։

«Սխալ չպետք է հասկանաք, մենք նպատակ չունինք հուզելու կրոնական վեճեր և կամ գրգռել այս կամ այն հատվածին, որ կրկնվին այն երևույթները, որոնք գործադրվել են համայնքները հուզելու կամ քննադատելու, դրանք հավասարապես դատապարտելի երևույթներ են։

«Կհարգենք ու կսիրենք մեր ավետարանական և կաթոլիկ եղբայրներին, բայց կմնանք Հայաստանյայց Եկեղեցու հարազատ զավակներ։ Գործակցություն կարող ենք ստեղծել նրանց հետ բարեսիրական, ազգային նպատակների շուրջ. բայց դա չի նշանակում, որ մենք պետք է հրաժարվենք մեր եկեղեցու ըմբռնումներից։ Քրիստոնեական ոգին շատ լայն, վեհ և բարձր ոգի է, ուրեմն և կարելի է այդ ոգիով համագործակցություն ստեղծել համայնքների մեջ։ Բայց երբ մեր վստահությունը ի չարն գործածեն և իրենց եկեղեցու հաշվույն միսիոներության դիմեն և հետամուտ լինին եկամուտներ որսալու, կազդարարենք նրանց պետք եղածը։

«Մեզ համար անըմբռնելի երևույթ է, որ մի եկեղեցի այլ եկեղեցու մեջ միսիոներություն կատարե. դա ուղղակի դեմ է քրիստոնեական ոգվույն և ըմբռնումին. հետևաբար բողոքում ենք եկեղեցի եկեղեցու մեջ միսիոներություն կատարելու դեմ։ Տարաբախտաբար այդ կատարվել է անցյալում. պետք է դադարի հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու մեջ օտար եկեղեցիների միսիոներական գործը։ Մեր հոգու բոլոր զորությամբ բողոքում ենք հայ ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու զավակների մեջ կատարվող օտար միսիոներական գործունեությունների դեմ (ծափեր). պետք է վերջ գտնի մարդորսությունը, մտքերը պղտորելը, եղբայրական վեճ և ատելություններ ստեղծելը...։

Օգնությունը պետք է կատարվի եղբայ-

բական սիրո վերա և ոչ դարձի բերելու բողոքական դամ կաթոլիկ մտքով։ Հին եկեղեցու մեջ փոխադարձ օգնություն այս հիմունքներով է կատարված, որից բազմաթիվ փաստեր ունինք։

«Եթե իմանամ, որ իմ վարդապետներից մեկը կամ այլուր գնացել է ուրիշ եկեղեցու կամ համայնքի մեջ, կամ նյութական օգնությունը դառայեցրել է և աշխատել որսարու կամ մարդ դարձի բերելու մտքով, ես խիստ կերպով կհանդիմանեմ նրան՝ պարսավելով այդպիսի հակաքրիստոնեական ձեռնարկը։ Քավ լիցի քաջալերել քույր եկեղեցվո և համայնքի մեջ կատարել այդպիսի գործ. դա կնշանակեր ամենամեծ անհակացողություն քրիստոնեական ոգու հանդեպ։ Քրիստոնեական ոգին չի կարող մարել մարդասիրական այս երևույթը. դա ի՞նչ տգեղ բան է, համոզում, հավատք և դավանություն ծախու առնել, դրամական, նյութական օգնության փոխարեն։ Դարձյալ ուզում եմ, որ լավ հասկանաք և սխալ չըմբռնեք, մենք դեմ չենք մեր հայ բողոքական և կաթոլիկ եղբայրներին, մենք հարգում ենք նրանց գաղափարի ազատությունը, նրանք մեր եղբայրներն են, մենք չենք կամենա, որ եղբայրական ատելություններ և վեճեր ծագեն մեր հայ ժողովրդի մեջ, բայց ուրիշի կարծիքն ու դավանությունը, գաղափարի ազատությունը հարգել չի նշանակում, որ հրաժարվենք մեր հայրերի ըմբռնումներից, մեր Մայր Եկեղեցու ուղղությունից և ավանդություններից։

«Հայաստանյայց Եկեղեցին ոչ միայն քրիստոնեական, այլև մեր ազգային և ազգապահպանության եկեղեցին է։

«Եթե այստեղ գտնվում են այնթափցիներ և կեսարիացիներ, նոքա կիմանան, որ ինչպիսի մեծ դեր է կատարել Հայ Եկեղեցին իրենց կյանքի մեջ։ Այդ քաղաքների մեր հայրենակիցները ոչ մի ձևով կարողացած են պահել հայ լեզուն, բայց կարող եմ ասել, որ նոքա մեզ չափ ու մեզնից ավելի հայ են մնացել, որովհետև հավատարիմ են մնացել ազգային եկեղեցուն։ Գնացեք Մ. Աթոռ Ս. Էջմիածին, գնացեք մանավանդ Երուսաղեմ և կտեսնեք, որ ամենաթանկագին զգեստներն ու նվերները մեր կեսարացի հայրենակիցներն են նվիրել։ Սրանով ուզում եմ ասել, որ եկեղեցին, Հայաստանյայց Եկեղեցին մի մեծ նախախնամական դեր է կատարել Հայ Ազգի պահպանման գործի մեջ։ Տեսեք ուրեմն սիրելիք, կորցրել ենք մեր լեզուն, կորցրել ենք մեր պետականությունը, նույնիսկ հեռացել ենք մեր հայրենիքից, բայց հայ ենք մնացել շնորհիվ Հայաստանյայց Եկեղեցու փրկարար գերին (երկար ծափահարություններ)։

«Պետք է լավ իմանաք. մեր Հայաստանյայց Եկեղեցին է մեր լեզուն ու գրականությունը պարգևել մեզ. նա տվել է հայուն հայերեն Ս. Գիրքը. նրան կպարտինք մեր փառավոր ու դարավոր մշակույթը։ Ոչ բողոքականությունը և ոչ հռոմեական եկեղեցին են դաստիարակել մեր ժողովուրդը քսան դարեր, այդ արել է Հայաստանյայց Եկեղեցին. և մեր պատմության բոլոր մեծ մարդիկը մենք կպարտինք Հայաստանյայց Եկեղեցու շունչին, որ հաղորդեր է նրանք։ Մենք պետք է հպարտ լինինք նրա զավակները լինելով (բուռն ծափեր)։ Հայ բողոքականներն ու կաթոլիկները մեր ազգակիցներն են, մեր եղբայրները. բայց Հայաստանյայց Եկեղեցու զավակների սիրտը պետք է բաբախի մեր Մայր, պատմական և դարավոր նկեղեցու համար, որ հայի ամենամեծ ստեղծագործությունն է ծագմամբ. զարգացմամբ և հարատևությամբ կապված Հայ ժողովրդի կյանքի հետ։

«Մենք հպարտ պիտի զգանք մեզ, որ այդ եկեղեցու զավակներն ենք (բուռն ծափեր) սակայն ո՛չ հայ կաթոլիկները և ո՛չ հայ բողոքականները չեն։ Հայ Եկեղեցին նաև մատակարարում է հոգևոր փրկությունը լավագույնս, դրանով չենք ուզում ասել, որ արտաքոյ Հայ Եկեղեցու չիք փրկություն, ինչպես կաթոլիկներն են հավատում հռոմեական եկեղեցու համար։ Այլ թե՝ Հայ Եկեղեցին ազգային տեսակետից յուր ունեցած բոլոր առավելությունների հետ յուր զավակներին կարող է ցույց տալ հոգևոր փրկության ճամբան, որ Ավետարանի սկզբունքներն են, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կյանքն ու վարդապետությունն է։

«Ինչպես այսօրվա դասախոսությամբ պարզվեց, Հայաստանյայց Եկեղեցուց հեռանալով մեր գաղութներից մի քանիսը կորած են ընդմիշտ, կորած են թե Հայոց Եկեղեցու և թե մեր Ազգի համար։ Այդ երևույթի ամենահետաքրքրական մի օրինակն է Նախիջևանի հայության մի հատվածի պատմությունը, որոնք հանկապես Տոմինիկյանների քարոզությամբ և հռոմեական միսիոներների ջանքերով բաժանվեցին Հայոց Եկեղեցուց և առանձին եպիսկոպատություն կազմեցին. արդյունքն այն եղավ, որ երբ նեղության օրերն եկան, պարսկական հարստահարության, հալածանքի և բռնության հետևանքով թուլացան և անկարող եղան իրենց հայությունն ու հավատը պահպանելու և ամա՛ղ ստիպված

եղան կարևորագույն մասով մահմեդական կրոնն ընդունելու և բոլորովին կորան մեզ համար։ Մինչդեռ իրենք՝ միսիոներությունն կատարողները ամենից առաջ փախան Եվրոպա...

«Նախիջևանի շրջանում գյուղեր կան, որոնք պահել են դեռ իրենց հայկական դիմագիծը, հայու արտահայտությունը. մեզ հետ իրենք ևս գիտեն, որ իրենց նախնիքը հայ են եղել. ահա տնիթորական շարժման հետևանքներից մեկը, լատին միսիոներների և հայ լատինամոլների աշխատությամբ, նույնիսկ բուն Հայրենիքում նոքա կորան մեզ համար։

«Նույն տխուր երևույթը տեսնում ենք և Լեհաստանի հայ գաղութի մոտ։ Մի լավ կազմակերպված, բարգավաճ և զորավոր գաղութ. ոչ միայն կրոնական, այլև դատատանական ազատություն էր ձեռք բերել. իրենց դատերը իրենք էին տեսնում, բայց ափսոս, որ Շիք-Նիկոլ եպիսկոպոսի մը պատճառավ, որ փառասիրությամբ դավաճանեց Հայ Եկեղեցուն, և հատկապես Հիռուսյան կարգի կրոնավորների ձեռքով հաջողեցավ վերջ ի վերջո այս պատվական գաղութը բաժանել Հայ Եկեղեցուց, ու դրանք ևս կորան թե Հայաստանյայց Եկեղեցու և թե Հայ Ազգի համար։

«Երրորդ անգամ կրկնում ենք և խնդրում, որ տխուր չհասկանաք. մենք չենք ուզում վիրավորել հայ քողոքականներին և կաթոլիկներին, նրանք մեր եղբայրներն են, ոչ մի խնդիր և վեճ չունինք նրանց հետ, պատմական իրողությունները նկատի ունինք։

«Այլ մեր. զավակներին հորդորում ենք սիրել իրենց Մայր Եկեղեցին։ Հարգեցեք դիմացինի համոզումը և Եկեղեցին, բայց մեր հայ դավանությունն չեղել և տեղի չտալ. լավ պետք է հասկանանք, որ Հայ Եկեղեցին է մեր գոյության պահապանը եղել, նա է մեզ մխիթարել, նա է մեզ հոգվով ծնել և դաստիարակել, տառապել մեր ժողովրդի հետ, նահատակվել և քամել յուր զավակների հետ վշտի ու տառապանքի բաժակը մինչև մրուրը։

«Մենք հորդորում ենք մեր զավակներին երախտապարտ լինել Հայ Եկեղեցու հանդեպ, և հավատարիմ մնալ նրա օրենքներին, դավանության և սկզբունքներին։

Օրհնյալ լինիք ամենքդ. ամեն»։

Կիլիկիո Վեհափառ Հայրապետի խոսքերը քրիստոնեական ապրումներու և հայրենասիրական զգացումներու արտահայտություններ են։

Հովվապետական իր լրիվ դերին մեջ է Վեհափառ Հայրապետը։ Իր հոտի պաշտպանության համար ան մեզ յուրաքանչյուր հայու համար կուտա գերազանցորեն նվիրական պատգամ մը։ Մեր սրտերու լավագույն անկյան մեջ պահենք այս պատգամը, ըմբռնելով մեր Շնորհազարդ, ալեփառ և գիտնական Հայրապետին քրիստոնեական ու հայրենասիրական բարձր ոգին։

Բայց մենք պարզ հոգևոր հովվի, և անարժան մի վարդապետի, (իբր սպասավոր Հայոց Ս. Եկեղեցվո), պիտի ուզեինք խոսքը ըսել կարգ մը հարցերու մասին, ուր ոտնձգություններ կտեսնենք մեր պաշտելի և Ուղղափառ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո դեմ։

Պատերազմի անցնող մի քանի տարիներու ընթացքին, մեր այս երկիրներուն մեջ շատ բաներ տեսանք, լսեցինք ու տակավին կլսենք, որոնք հայության ու մանավանդ Հայոց Ս. Եկեղեցվո դեմ ելույթներ էին, ընդվզեցուցիչ ըլլալու աստիճան...։ Բայց կապար թափեցինք մեր ականջներուն ու երկանքաքար իջեցուցինք մեր սրտերուն վրա... վասնզի պատերազմի շրջան էր...։

Այժմ սակայն նպատակ չունինք հաշվեհարդարի ենթարկել բոլոր մեզի դեմ մեզ հասածներն ու չհասածները, որոնցմով հասկանալի է ոմանք հայ ժողովուրդեն ու Հայց. Եկեղեցվո հոտեն «բան մը կորզելու համար» շատ առաջ գացին։

Մեր հայ ժողովուրդը հաջորդաբար պետք է տեսնի և լուսաբանի, որ Պատմությունը քանի՞ հատ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ կճանչնա։ Պատմական իրողությունները պետք է խոսին, որ տակավին երկու դար առաջ միայն հնարվեցավ Կիլիկյան երկրորդ և կեղծ «կաթողիկոսություն» մը, արդյունք՝ փառասիրության և շահամոլ մրցակցության։ Պետք է մեր ժողովուրդը տեսնի մերկացումն ու մերժումը այն բոլոր փատաստրկությանց, որոնք մեր Ազգին և Եկեղեցվույն հիմերը կփորեն։

Մեզի՝ բոլորիս անխտիր ուրիշ ճամբա չէ մնացած, բայց միայն դատնալ, դատնալ դեպի արևելք, դեպի Արարատի գագաթին նշույով Լուսավորչի կանթեղին կողմը և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր իշավ Աստուծո Միածին Որդին՝ հիմնելու համար հայ ժողովրդի միակ և ճշմարիտ, սուրբ և ուղղափառ Հայաստանյայց Եկեղեցին։

Մարտ, 1946 թ.
ԱՆԹԻԼԻԱՍ